

## ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔԿԵԻ ՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է Սահմանադրության 2015 թ. փոփոխություններով նախատեսված քաղաքացիների կողմից օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքը (ՀՀ Սահմանադրություն, 109-րդ հոդվածի 6-րդ մաս) սահմանափակող իրավական կարգավորումները վերանայելու և քաղաքացիներին սեփական օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու ավելի գործուն իրավական մեխանիզմներով ապահովելու անհրաժեշտությամբ: Քաղաքացիների՝ օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու իրավունքի անարդյունավետ և ոչ գործուն իրավական կարգավորումների մասին վկայում է թե՛ անցած տարիների փորձը, որի ընթացքում չի գրանցվել այդ իրավունքը իրացնելու որևէ դեպք և թե՛ այլ երկներում համանման իրավակարգավորումների համեմատական վերլուծությունը:

ՀՀ Սահմանադրությունը նման իրավունք նախատեսում է առնվազն 50.000 քաղաքացիների համար, ինչը ինքնին բավական բարձր շեմ է, եթե հաշվի առնենք համանման կարգավորումները այլ երկներում (տե՛ս աղյուսակ 1, աղբյուրը՝ [«Քաղաքացիական նախաձեռնությունների ինստիտուտը և դրա բարելավման հնարավորությունները Հայաստանում» գեկույց](#), Հանրային քաղաքականության ինստիտուտ, Երևան, 2019):

ՀՀ հանրաքվեի մասին սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվում են լրացուցիչ պայմաններ այս իրավունքի իրացման համար, այդ թվում նաև նախաձեռնող խմբի նվազագույն անդամների թիվը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախաձեռնող խմբի գրանցման կամ մերժման պայմանները, ինչպես նաև ստորագրությունների հավաքման կարգը և ժամկետները (Օրենքի 13-րդ հոդված): Օրենքով նախատեսված չէ նաև ստորագրությունների հետ կապված նկատված անճշտությունների վերացման հնարավորություն:

**Աղյուսակ 1: Քաղաքացիների օրենսդրական նախաձեռնությունները Եվրոպայում\***

	Պահանջվող ստորագրությունների քիվը	Հարաբերական կշիռը (%)	Ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների քիվը	Նախաձեռնող խումբը	Մտորագրահավաքի տևողությունը
Ալբանիա	20 000	0.57	3,452,324	1 և ավելի	60 օր
Ավստրիա	100 000	1.56	6,400,993	1 և ավելի (նախնական՝ 8000)	4.5 ամիս
Էստոնիա	1000	0.1	899,793	-	-
Բալանիա	500 000	1.44	34,597,038	1 և ավելի	9+3 ամիս
Բուլղարիա	50 000	0.09	50,736,204	-	6 ամիս
Լատվիա	1/10	10	1,548,100	առնվազն 10	12 ամիս
Լեհաստան	100 000	0.3	30,629,150	առնվազն 15 (նախնական՝ 1000)	3 ամիս
Լիտվա	50 000	2.07	2,405,143	առնվազն 10	2 ամիս
<b>ՀՀ</b>	<b>50 000</b>	<b>1.9</b>	<b>2,591,276</b>	<b>առնվազն 50</b>	<b>45 օր</b>
Նիդերլանդներ	40 000	1.3	3,018,064	-	-
Վրաստան	25 000	0.7	3,533,672	-	45 օր
Սլովենիա	5000	0.29	1,712,616	առնվազն 5	60 օր
Ֆինլանդիա	50 000	0.9	4,246,803	1 կամ ավելի	6 ամիս

\* Չնայած քաղաքացիական նախաձեռնությունների ինստիտուտը տարածված է աշխարհի հիսունից ավելի երկրներում՝ աղյուսակում ներկայացման համար ընտրվել են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը (ԵԱՀԿ) և Վենետիկի հանձնաժողովին անդամակցող այն երկրները, որտեղ նշված մեխանիզմները պարբերաբար գործարկվում են և չունեն գուտ հոշակագրային բնույթ: Հաշվի է առնվել նաև դրանց նմանությունը ՀՀ մոդելին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով նախատեսվում է՝

- կիսով չափ կրճատել քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու կամ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար կազմավորվող նախաձեռնող խմբի անդամների նվազագույն քանակը՝ 50-ից իջեցնելով մինչև 25-ի (Օրենքի 13-րդ հովածի 1-ին մաս),
- երկարեցնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախաձեռնող խմբի և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի գրանցման կամ մերժման համար նախատեսված ժամկետը՝ 3 օրը դարձնելով 10: Ողջամիտ ժամկետներ տրամադրելով լիազոր մարմնին նախատեսված փաստաթղթերը ուսումնասիրելու համար, միաժամանակ սահմանվում է, որ այս ժամկետներում որոշումը չկայացնելու դեպքում նախաձեռնող խումբը համարվում է գրանցված (Օրենքի 13-րդ հովածի 5-րդ մաս),

- վերացել ստորագրությունների հավաքագումը բացառապես որոշակի տարածքներում (համայնքապետարաններում, բազմաբնակավայր համայնքներում՝ նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում, Երևան քաղաքում՝ վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում, մարզպետարաններում) կազմակերպելու սահմանափակումը (Օրենքի 13-րդ հովածի 15-րդ մաս) նպատակ ունենալով նվազեցնել ստորագրությունների հավաքագրման հետ կապված խոչընդոտները,
- նույն նպատակով չեղարկել ստորագրությունների հավաքագումը հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ իրականացնելու պայմանը (Օրենքի 13-րդ հովածի 16-րդ մաս),
- երկարեցնել ստորագրությունների հավաքումն իրականացնելու համար նախատեսված օրերի քանակը օրենսդրական նախաձեռնությունների համար սահմանելով 90 օր նախկին 45-ի փոխարեն, իսկ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենսդրական նախաձեռնությունների համար սահմանելով 180 օր նախկին 90-ի փոխարեն (Օրենքի 13-րդ հովածի 19-րդ մաս),

### 3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ներդնել անմիջական ժողովրդավարության գործուն տարրեր: Սա ոչ միայն «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի տեղ գտած պարտավորությունների իրականացումն է (համաձայն 23-րդ կետի՝ «Զարգացնելու ենք ուղիղ ժողովրդավարության մշակույթը տեղական եւ համապետական հանրաքվեների ինստիտուտի միջոցով»), այլ հատկապես քաղաքացիներին պետական կառավարման ավելի անմիջականորեն մասնակցելու և քաղաքական իրավունքները իրացնելու լրացուցիչ հնարավորություն և ազդակ է ստեղծելու: